ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Անի Զոհրաբի Գրիգորյանի Ը.00.03՝ «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի համար ներկայացված «ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման բարելավման ուղիները» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը:

Պետական պարտքի, այդ թվում արտաքին պետական պարտքի կառավարման հիմնահարցերը ՀՀ-ում գնալով ավելի արդիական են դառնում: Օրենքով սահմանված կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցության գերազանցումը 2020-2021 թթ. մեծ ուշադրություն են պահանջում ոչ միայն օրենքով սահմանված հարկաբյուջետային կանոնները հետևողականորեն պահպանելու, այլև պարտքի կառուցվածքի բարելավման և ռիսկերի կառավարման տեսակետից: ՀՀ կառավարության պարտքի զգալի մասը կենտրոնացած է արտաքին և արտարժութային գործիքների վրա, ինչը պարտքի պորտֆելը խոցելի է դարձնում փոխարժեքի ռիսկերի նկատմամբ: Այնուամենայնիվ, ներքին պարտքի կշիռը և պետական պարտատոմսերի շուկայի խորությունը ևս վերջին տասնամյակում զգալիորեն ավելացել են, և այդ միտումը պետք է շարունակվի:

Երկրի զարգացմանը զուգահեռ փոխվում է արտաքին պարտքի կառուցվածքը, աստիճանաբար նվազում են ֆինանսավորման արտոնյալ աղբյուրները և ավելանում են շուկայական գործիքները, միջազգային ֆինանսական կառույցները առաջարկում են ավելի կարճ ժամկետով և հիմնականում լողացող տոկոսադրույքով վարկեր: Այս համատեքստում անհրաժեշտություն է առաջանում ավելի խորությամբ ուսումնասիրել արտաքին պետական պարտքային գործիքների ռիսկի ցուցանիշները, ներառյալ փոխարժեքի և տոկոսադրույքի ռիսկի ցուցանիշները, ուստի արտաքին պարտքի կառավարման բարելավման ուղիները մշտապես պետք է ուշադրության կենտրոնում լինեն:

Անի Զոհրաբի Գրիգորյանի ատենախոսությունում արծարծվող հիմնախնդրի գիտագործնական բնույթը, ինչպես նաև հրատապությունը պայմանավորում են թեմայի արդիականությունը:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է վերլուծել և գնահատել ՀՀ-ում արտաքին պետական պարտքի կառավարման արդյունավետությունը և առաջարկել ներկա աշխարհաքաղաքական իրավիճակին համահունչ կառավարման բարելավման ուղիներ: Ատենախոսության նպատակով պայմանավորված առաջադրվել են ներքոհիշյալ խնդիրները՝

• ուսումնասիրել ՀՀ պետական պարտքի կառավարման ռազմավարությունը՝ վեր հանելով շոշափելի ռիսկերը,

• մշակել պետական պարտքի կառուցվածքում արտաքին պետական պարտքի տեսակարար կշռի նվազեցման և ներքին փոխառու միջոցների ավելացման հիմնավորման տեսանկյունից գործոնային վերլուծության մոտեցում,

• հիմնավորել և առաջարկել ՀՀ պետական պարտքի բեռի գնահատման հայեցակարգում միջազգային խոշորագույն հետազոտական կառուցների կողմից մշակված առավել նպատակահարմար մոտեցումների կիրառման նպատակահարմարությունը,

• գնահատել ՀՀ իրական աշխատավարձի, միջին ամսական աշխատավարձի և պետական պարտատոմսերի ցուցանիշների հարաբերակցությունը կորելացիոն մեթոդով,

• գնահատել ՀՀ միջին ամսական աշխատավարձի և արտաքին պետական պարտքի ցուցանիշների հարաբերակցությունը կորելացիոն և ռեգրեսիոն մեթոդներով,

• իրականացնել ՀՀ-ում տնտեսական ակտիվության, դոլարի նկատմամբ դրամի փոխարժեքի և արտաքին պետական պարտքի ցուցանիշների միջև բազմակի գծային ռեգրեսիոն և կորելացիոն գնահատումներ՝ արդյունքները ստուգելով «Shapiro–Wilk» թեստի միջոցով:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը բաղկացած է 137 էջից՝ առանց հավելվածների:

Ատենախոսության **«Ներածություն»** բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտն ու առարկան, տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, հիմնական գիտական արդյունքները և նորույթը, հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները, ինչպես նաև ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:

Հետազոտության առաջին **«Արտաքին պետական պարտքի կառավարման տեսամեթոդաբանական հիմքերը, արտերկրյա փորձը եվ կառավարման օրենսդրահիրավական հիմքերը»** գլխում ներկայացվել են արտաքին պետական պարտքի տնտեսագիտական բովանդակությունը և բնութագրական մոտեցումների համեմատական վերլուծությունը, պետական պարտքի առաջացման պատճառները և ֆինանսավորման արտերկրյա փորձը, արտաքին պետական պարտքի կառավարման օրենսդրահիրավական հիմքերի համեմատական վերլուծությունը ՀՀ-ում և հիմնական զործընկեր երկրներում:

Ինչպես պետական պարտքի, այնպես էլ արտաքին պարտքի վերաբերյալ տնտեսագիտական հետազոտություններում դեռևս գոյություն չունի միասնական ընկալում: Շատ հաճախ արտաքին պետական պարտքը սահմանելիս, հեղինակները հոում են անում պարտքի վերաբերյալ իրենց երկրների օրենսդրական ամրագրումներին: Այս համատեքստում, կարող ենք ընդգծել 2008 թվականի մայիսի 26-ին ընդունված ՀՀ օրենքը «Պետական պարտքի մասին», որով էլ պարտքային հարաբերությունները իրավական ձևակերպումներ ստացան: «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքում արտաքին պետական պարտքը սահմանվում է որպես Հայաստանի Հանրապետության անունից և Կենտրոնական բանկի անունից Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտների և օտարերկրյա պետությունների հանդեպ ստանձնված և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումար: «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքում որպես արտաքին պետական պարտքի ներգրավման աղբյուրներ են սահմանվում օտարերկրյա պետություններից, միջազգային կազմակերպություններից, վարկավորող բազմակողմ հաստատություններից փոխառությունները և վարկերը, ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձանցից փոխառությունները և վարկերը, ոչ ռեզիդենտների կողմից ձեռք

բերված պետական զանձապետական և արտարժույթով թողարկված պարտատոմսերը և արտաքին պետական երաշխիքները:

Սույն գլխում ատենախոսը բացահայտել է մասնագիտական հանրույթում պարտքային հիմնախնդրի վերաբերյալ առկա մոտեցումները, զարգացման միտումները և վերջինիս կառավարման միջազգային փորձը: ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման արդյունավետության բարելավման տեսանկյունից ուսումնասիրվել է նաև ՀՀ հիմնական առևտրային գործընկեր երկրների վարած պարտքային քաղաքականությունների ռազմավարական մեխանիզմները, որոնց արդյունքում ատենախոսը կարևորել է պարտքի սպասարկմանը և մարմանն ուղղվող ծախսերի անվտանգային սահմանագծի օրենսդրական ամրագրման անհրաժեշտություն: Հաշվի առնելով պարտքի հաջողված կառավարման համաշխարհային պրակտիկայի արդյունքները՝ ձևակերպվել է հինգերորդ գիտական նորույթը:

Ատենախոսության երկրորդ՝ **«Արտաքին պետական պարտքի կառավարման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությում»** գլխում քննարկվել են արտաքին պետական պարտքի ձևավորման, գնահատման և կառավարման մոտեցումները, ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման ռիսկերը և արտաքին պարտավորությունների կատարման առանձնահատկությունները միջնաժամկետ հատվածում, արտաքին պետական պարտքի վերլուծությունը և կառավարման գործընթացում վեր հանված խնդիրները:

Այս գլխում ատենախոսը ուսումնասիրելով ՀՀ արտաքին պետական պարտքի դինամիկան պատերազմական և «Covid»-յան ժամանակահատվածներում՝ փաստել է, որ թեև արտաքին պետական պարտքը սպասարկվել է առանց խոչընդոտների, այնուամենայնիվ, շոշափելի է եղել արտաքին պարտքի զգայունությունը փոխարժեքի և վերաֆինասավորման տոկոսադրույքի շոկերի նկատմամբ, ինչը հիմք է հանդիսացել ատենախոսության հաջորդ գլխում կատարվող վերլուծությունների համար: Սույն գլխում գիտական նորույթ չի ձևակերպվել:

Ատենախոսության երրորդ՝ **«ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման արդյունավետության բարձրացման մոտեցումներն ու դրանց լուծման ուղիները»** գլխում քննարկվել են ՀՀ պետական պարտքի կառավարման խնդիրները և լուծումները

կառուցվածքային առանձնահատկությունների համատեքստում, ՀՀ արտաքին պահուստների օպտիմալ մակարդակի և պետական պարտքի սպասարկման ներուժի գնահատման մոտեցումը, ինչպես նաև արտաքին պետական պարտքի արդյունավետ կառավարման բարելավման ուղիները:

ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ծախսերի և ռիսկերի վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ պարտքի պորտֆելն ամենաշատը ենթակա է փոխարժեքի ռիսկի ազդեցությանը: Այդ իսկ պատճառով, ՀՀ կառավարությունն առաջնային է համարում պետական գանձապետական պարտատոմսերի շուկայի շարունակական զարգացումը և ներքին շուկայից փոխառությունների ներգրավման ծավալի աճը: 2020-2023 թթ.-ի ժամանակահատվածում նախատեսվում է ավելացնել ներքին փոխառու զուտ միջոցների հաշվին պակասուրդի ֆինանսավորման կշիռը՝ 2023 թ.-ին այն հասցնելով մինչև 55.0%: Կարևոր է նշել, որ միայն ՀՀ կառավարության պարտքի կառավարման ոլորտում իրականացվող միջոցառումները բավարար չեն ՀՀ կառավարության ներքին պարտքի շուկան էականորեն զարգացնելու համար: Ներքին պարտքի շուկայի զարգացման և ներդրողների բազայի ընդլայնման նախապայմաններից է նաև ֆինանսական շուկայի այլ հատվածների (կենսաթոշակային, ապահովագրական և այլն) հետագա զարգացումը:

Առաջին ենթագլխում ատենախոսը վերլուծել է ՀՀ իրական աշխատավարձի, միջին ամսական աշխատավարձի, պետական պարտատոմսերի միջև գոյություն ունեցող կապը՝ կորելացիոն մեթոդով և Սփիրմանի աստիճանի հարաբերակցության գործակցով, իսկ գնահատման արդյունքները ստուգել է Սամուել Սանֆորդ Շապիրոյի և Մարտին Ուիլքի հրապարակած թեստի միջոցով: Ատենախոսի կողմից գնահատվել է նաև ՀՀ ամսական միջին աշխատավարձի, որպես առաջնային ազդեցության փոփոխականներ դիտարկված պետական բյուջեի եկամուտների ու պաշտոնական տրանսֆերտների, ՀՆԱ և ՀՀ արտաքին պետական պարտքի ցուցանիշների միջև փոխկապվածությունը՝ ռեգրեսիոն մեթոդով: Հիմնվելով իրական աշխատավարձի, միջին ամսական աշխատավարձի և պետական պարտատոմսերի միջև բացահայտված դրական կապի, ինչպես նաև միջին ամսական աշխատավարձի և արտաքին պետական պարտքի ցուցանիշների միջև գնահատման արդյունքների վրա՝ ատենախոսը եզրակացրել է, որ ապագա հեռանկարում իրական

աշխատավարձի բարձրացումը կարող է նպաստել ՀՀ պետական պարտքի կառուցվածքում արտաքին պետական պարտքից կախվածության թուլացմանը: Պետական բյուջեի եկամուտների ու պաշտոնական տրանսֆերտների, ՀՀ համախառն ներքին արդյունքի աճը ևս առանցքային գործոններ են հանդիսացել արտաքին պարտքի նվազեցման համատեքստում: Այս ենթագլխում հիմնավորվել է առաջին գիտական նորույթը:

Երկրորդ ենթագլխում ատենախոսն ուսումնասիրել է ՀՀ կենտրոնական բանկի միջազգային պահուստների բավարարելիության մակարդակը՝ որպես արտաքին պարտավորությունների սպասարկման կարողությունը երաշխավորող և խոցելիությունը մեղմող գործոն, գնահատել է ՀՀ միջազգային պահուստների համալրվածությունն ըստ Ռեդիի չափանիշի, ինչպես նաև ՀՀ միջազգային պահուստների և արտաքին պարտքի սպասարկման ծավալների հարաբերակցությունն՝ ըստ Գվիդոտիի կանոնի: Հիմք ընդունելով կատարված գնահատումների արդյունքները՝ ատենախոսը եզրակացրել է, որ ՀՀ արտաքին պահուստների ներկա մակարդակը գնահատվում է բավարար՝ անկանխատեսելի շոկերի ի հայտ գալու պարագայում: Այս ենթագլխում է հիմնավորվել երկրորդ գիտական նորույթը:

Երրորդ ենթագլխում ատենախոսը գնահատել է ՀՀ պարտքի կայունության գործակիցը հիմնված՝ Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի կողմից պարտապան երկրների դասակարգման նպատակով կիրառվող արտաքին պարտքի և արտահանման տարեկան մեծության հարաբերակցության մեթոդաբանական լուծումների վրա: Ատենախոսը եզրակացրել է, որ հիմք ընդունելով Համաշխարհային բանկի չափանիշները (≥ 220– կրիտիկական; -132-220 – ընդունելի; ≤ 132 – ցածր)՝ ընդհանուր առմամբ, պարտքային գործակիցը դիտարկվող ժամանակահատվածներում գտնվել է «ընդունելի» միջակայքում, բացառությամբ 2010, 2016, 2021 թվականների, երբ պարտքային գործակիցը գտնվել է «կրիտիկական» տիրույթում՝ պայմանավորված ՀՀ առջև ծառացած արդեն իսկ նշված մարտահրավերներով:

Սույն ենթագլխում ատենախոսի կողմից իրականացվել է բազմակի կորելացիոն և ռեգրեսիոն գնահատումներ ՀՀ-ում տնտեսական ակտիվության, փոխարժեքի և արտաքին պետական պարտքի ցուցանիշների միջև՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ պետական պարտքի նվազեցման ռազմավարության մեջ հիմնական շեշտադրումը կատարվում է բարձր

տնտեսական աճի ապահովմանը՝ որպես պարտքային բեռի սպասարկման միջոցների ապահովման կենսական աղբյուր: Հիմք ընդունելով գնահատման արդյուքները, ատենախոսը եզրակացրել է, որ դիտարկված ժամանակահատվածում ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշի, փոխարժեքի տատանումները հանգեցնում են ՀՀ արտաքին պետական պարտքի համապատասխանաբար 0,1 և 0,7 տոկոսի փոփոխության: Այս ենթագլխում է ձևակերպվել են երրորդ և չորրորդ գիտական նորույթները:

«Եզրակացություններ» բաժնում ամփոփվել են ատենախոսության հիմնական արդյունքները:

Ատենախոսության ստացված արդյունքների հավաստիությունն ու դրանց գործնական նշանակությունը

Ատենախոսության հետազոտության օբյեկտը ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման ոլորտն է, իսկ առարկան՝ ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման արդյունավետության բարելավման հիմնահարցերը:

Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել պարտքի կառավարման և հարկաբյուջետային քաղաքականությունների մշակման և իրականացման գործընթացում՝ ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ կենտրոնական բանկի և այլ մարմինների կողմից: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել նաև պետական պարտքի և ֆինանսական զարգացման հետազոտություններով զբաղվող մասնագետների կողմից:

Ատենախոսության գիտական արդյունքները և նորույթը

Ատենախոսության գիտական նորույթն արտահայտվել է հետևյալում.

• Կառուցվել է արտաքին փոխառու միջոցներից կախվածության թուլացման առանցքային գործոններ դիտարկված իրական աշխատավարձի, միջին ամսական աշխատավարձի և պետական պարտատոմսերի փոխկապակցության գնահատման մոտեցում, որի միջոցով հիմնավորվել է ՀՀ պետական պարտքի կառուցվածքում արտաքին պարտքի տեսակարար կշռի նվազեցման նպատակով ներքին փոխառու միջոցներին ապավինող քաղաքականության արդյունավետությունը:

• Մշակվել է ՀՀ արտաքին պահուստների օպտիմալ մակարդակի գնահատման համալիր մոտեցում, որի հիմքում դրվել են միջազգային պրակտիկայում կիրառվող «Ռեդի»-ի ու

«Գվիդոտի»-ի չափանիշները, որի արդյունքում հիմնավորվել է անկանխատեսելի շոկերի ի հայտ գալու դեպքում արտաքին պահուստներով պարտքի սպասարկման բավարար ներուժը:

• Առաջարկվել է ՀՀ պետական պարտքի կայունության գնահատման մոտեցում՝ հիմնվելով ԱՄՀ և ՀԲ կողմից պարտապան երկրների դասակարգման նպատակով կիրառվող արտաքին պարտքի և արտահանման տարեկան մեծության գործակիցների հարաբերակցության գնահատման մեթոդաբանական լուծումների վրա:

• Կառուցվել են ՀՀ տնտեսական ակտիվության, փոխարժեքի և արտաքին պետական պարտքի ցուցանիշների միջև կորելացիոն և բազմակի գծային ռեգրեսիոն վերլուծության մոտեցումներ, որոնց արդյունքների կիրառումը կնպաստի ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման բարելավմանը:

• Հիմնավորվել է ՀՀ-ում պարտքի կառավարման գործակալության գործարկման անհրաժեշտությունը՝ որպես ներգրավված արտաքին փոխառու միջոցների շնորհիվ ապահովված տնտեսական աճի չափելիության գնահատման մեխանիզմ և առաջարկվել է ներգրավված միջոցների նկատմամբ հաշվետվողականության, թափանցիկության, հասցեականության և արդյունավետության ապահովման մոտեցում:

Ատենախոսության վերաբերյալ մեր կողմից ներկայացվել էին հետևյալ դիտողությունները.

• Ատենախոսությունում բացահայտվել են աշխատավարձերի և պետական պարտատոմսերի, ինչպես նաև միջին ամսական աշխատավարձի և արտաքին պետական պարտքի ցուցանիշների միջև կապերի քանակական գնահատականները, սակայն ցանկալի կլիներ նաև ներկայացվեր փոխանցման այն շղթաները, որոնցով միջոցով աշխատավարձերի բարձրացումը հանգեցնում է պետական պարտատոմսերի տեղաբաշխման ծավալների աճին, իսկ միջին աշխատավարձի բարձրացումը՝ արտաքին պետական պարտքից կախվածության թուլացման:

• Ատենախոսությունում անդրադարձ չի կատարվել բյուջետային համակարգի մասին օրենքին, որը ի թիվս այլ հարցերի կարգավորում է նաև կառավարության պարտքի տարբեր սահմանաչափերի՝ 40, 50 և 60 տոկոս, պայմաններում հարկաբյուջետային

քաղաքականության արձագանքման և հաշվետվողականության պահանջները, ինչպես նաև այն բացառիկ դեպքերը, երբ պարտքի վերին շեմը կարող է գերազանցվել՝ չհանգեցնելով հարկաբյուջետային կանոնների գործողությանը: Այդուհանդերձ պարտքի 60 տոկոս սահմանաչափին ատենախոսը • անդրադարձել է՝ «Պարտքի մասին օրենքի» կարգավորումների տեսանկյունից:

• Որպես պարտքի կառավարման արդյունավետության բարձրացման ուղղություն առաջարկվել է պարտքի կառավարման գործակալության ստեղծումը և հիմնավորվել է ինստիտուցիոնալ տեսանկյունից նման գործակալության արդյունավետությունը՝ ներկայումս պետական լիազոր մարմնի կողմից պարտքի կառավարման համակարգի համեմատ: Գործակալության ստեղծումից սպասվող առանցքային արդյունք է նշվել պարտքի արտաքին փոխառու միջոցների շնորհիվ ապահովված տնտեսական աճի չափելիության գնահատման մեխանիզմը: Այս տեսանկյունից ցանկալի կլիներ, որ ատենախոսը նշեր, թե ինչով է պայմանավորված նման մեխանիզմի բացակայությունը ներկայիս համակարգում և ի՞նչ գնահատման մեխանիզմներ են առկա պարտքի կառավարման գործակալություն ունեցող մյուս երկրներում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերոնշյալ դիտողությունները էական ազդեցություն չեն ունեցել ատենախոսության արդյունքների վրա: Անի Զոհրաբի Գրիգորյանի՝ **«ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման բարելավման ուղիները»** թեմայով ատենախոսությունը կարելի է որակել որպես ինքնուրույն գիտական հետազոտություն, որտեղ դրված և լուծված են ՀՀ պետական պարտքի կառուցվածքում արտաքին պետական պարտքից կախվածության թուլացման և պարտքի կառավարման քաղաքականության բարելաման տեսական և գործնական կարևորություն ունեցող խնդիրներ: Վերլուծության արդյունքում առաջադրված են գիտական նորույթ պարունակող մոտեցումներ, որոնք կարող են նպաստել ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման արդյունավետության բարձրացմանը:

Հետազոտության արդյունքները քննարկված են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում: Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված 13 (տասներեք) գիտական հոդվածներում, որից ինը՝ հոդված ՀՀ ԲԿԳԿ-ի՝ ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականներում, երեք՝ հոդված միջազգայնորեն ինդեքսավորված ամսագրերում, մեկ՝ հոդված Emerging Sources Citation Index / Web of Science գիտաչափական շտեմարանում ընդգրկված պարբերականում:

Ներկայացված սեղմագիրը կազմված է ՀՀ ԲԿԳԿ-ի պահանջներին համապատասխան և համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները: Այսպիսով, **Անի Զոհրաբի Գրիգորյանի՝ «ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման բարելավման ուղիները»** թեմայով պաշտպանության ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԻՄԱԽՈՍ՝
Հայաստանում Արժույթի միջազգային հիմնադրամի
մշտական ներկայացուցչության տնտեսագետ,
տնտեսագիտության թեկնածու՝ Վ.Զանվելյան

Աշխատավայրից տեղեկանքը կցվում է: